ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. N –Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» հ.656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Երևան քաղաքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, Երևանի քաղաքապետը օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի վարչական տարածքում գտնվող հողերի ընթացիկ հաշվառումը և կազմում է Երևանի հողային հաշվեկշիռը։

ՀՀ հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)։ Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմվում է հողերի պետական հաշվառման ընթացիկ տվյալների հիման վրա։

Հողային հաշվեկշռում արտացոլվում են հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ։ Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխությունները՝ հողի սեփականության ձևի, հողի օգտագործման ձևի, հողի նպատակային նշանակության, հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման, քանդման և այլ փոփոխությունները։

Երևան քաղաքի վարչական տարածքը 2012 թվականի հուլիսի 1-ի համեմատ փոփոխություն չի կրել և կազմում է ընդամենը 22328 հա։

Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ Կառավարության 1996թ հուլիսի 18-ի N216 և Երևանի քաղաքապետի 21.11.2011թ. թիվ 5820-Ա որոշումների հիման վրա կատարված պետական գրանցման արդյունքում որպես օտարերկրյա պետությունների սեփականություն հաշվառվել է Իրանի Իսլամական Հանրապետությանը տրամադրված 2հա մակերեսով հողամասը (հատուկ նշանակության հողերի կատեգորիա)։

Գյուղատնտեսական նշանակության հողերը ավելացել են 0.3 հա ջրային հողերի հաշվին, փաստացի սահմաններով հաշվառման արդյունքում, ինչպես նաև 3.29հա այլ

ճշգրտումներով: Այսպիսով գյուղատնտեսական նշանակության հողերը 2012թ. համեմատ ավելացել են 1.59հա և կազմում են ընդամենը 3556.3հա:

Բնակավայրերի հողերը պակասել են 0.5 հա տարբեր վարչական շրջաններում՝ անցել արդյունաբերության հողերի կատեգորիա՝ կաթսայատների հողամասերի սահմանների ճշգրտմամբ և 3.2 հա գյուղատնտեսական նշանակության հողերին, որը առաջացել է Նուբարաշեն համայնքի այգեգործական հողերի հաշվառման ճշգրտման արդյունքում: Բնակավայրերի հողերը 2012թ. համեմատ պակասել են 3.7 հեկտարով և կազմում են ընդամենը 11839.1 հա:

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը վերոհիշյալ ճշտումների հետևանքով ավելացել են 0.5 հա և կազմում են ընդամենը 3116.2 հա:

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի հաշվառման արդյունքում 2012թ. համեմատ ավելացել են 6.7 հա, որը նախկինում հաշվառված է եղել որպես ջրային ֆոնդի հող:

Նշված փոփոխությունը պայմանավորված է հողամասերի սահմանների փաստացի հաշվառմամբ և կազմում են ընդամենը 890.9հա:

Հատուկ պահպանվող հողերը փոփոխություն չեն կրել և կազմում են ընդամենը 989.1 հա:

Բնապահպանական հողերը փոփոխություն չեն կրել և այժմ կազմում են 79.4 հա:

Պատմամշակութային հողերը 2012թ. տվյալների համեմատ ճշտումով ավելացել են 0.4 հա (եկեղեցիների և հուշարձանների և դրանց հարակից հատվածների ուրվագծերի ճշտման արդյունքում) և այժմ կազմում են 646.8 հա:

Անտառային հողերը փոփոխություն չեն կրել և կազմում են ընդամենը 875.7 հա:

Ջրային հողերը պակասել են 7 հեկտարով և կազմում են ընդամենը 172.9 հա:

Տեղում կատարված հաշվառման արդյունքում Երևան քաղաքի վարելահողերը պակասել են 54.7 հեկտարով, անցել բազմամյա տնկարկների տակ և կազմում են ընդամենը 915.9 հա:

Բազմամյա տնկարկները ավելացել են 54.7 հա և կազմում են ընդամենը 302.1 հա:

Արոտները ի հաշիվ գյուղատնտեսական այլ հողատեսքերի ավելացել են 35.5հա և կազմում են ընդամենը 722.2 հա:

Այլ հողատեսքերը պակասել են 33.9 հեկտարով և այժմ կազմում են 1416 հա:

Քաղաքացիների սեփականության հողերը 2012 թվականի համեմատ ավելացել են 81 հեկտարով, ի հաշիվ համայնքային սեփականության հողերի աճուրդների, քաղաքացիների կողմից փաստացի օգտագործվող հողերի անհատույց օրինականացման և սեփականության իրավունքների վերականգնումների, որից՝ 77.1 հա տնամերձ հողեր, 3.9 հա խառը կառուցապատման և կազմում են ընդամենը 5384 հա:

Իրավաբանական անձանց սեփականության հողերը 2012թ. տվյալների համեմատ ավելացել են 29.8 հեկտարով, ի հաշիվ համայնքային սեփականության և այժմ կազմում են ընդամենը 2640.6 հա:

Համայնքային սեփականության հողերը 2012թ. տվյալների համեմատ պակասել են 139.8 հեկտարով համայնքային սեփականության հողերի օտարման, անհատույց փոխանցման, հողհատկացման հիմքերի վերականգնման հիման վրա և այժմ կազմում են ընդամենը 10891.8 հա:

Պետական սեփականության հողերը 2012թ. տվյալների համեմատ ավելացել են 26.9 հեկտարով, որից՝ 22.8 Երեբունի վարչական շրջանում թունաքիմիկատների գերեզմանոցին և սանիտարական գոտուն հատկացված տարածքի հաշվառման արդյունքում, իսկ 4.1հա առաջացել է ֆիզիկային ինստիտուտին հատկացված տարածքը վերագրանցելու և գույքային միավորների բաժանելու, կադաստրային քարտեզի ճշգրտման արդյունքում, և այժմ կազմում են ընդամենը 3396.6 հա:

Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց սեփականության հողերը ավելացել են 2 հա ի հաշիվ համայնքային սեփականության հողամասերի օտարումից ծագող իրավունքի պետական գրանցման:

Գյուղատնտեսական ոռոգվող հողերի ընդհանուր տարածությունը փոփոխություն չի կրել և այժմ կազմում է ընդամենը 3626.7հա:

Հողային հաշվեկշիռը կազմվել է հողերի պետական հաշվառում իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվառման ելակետային տվյալների հիման վրա, հաշվի առնելով տարվա ընթացքում իրականացված որակական, քանակական փոփոխությունները:

Հողային հաշվեկշիռը նախապես համաձայնեցվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Հայաստանի հանրապետության կառ
անշարժ գույքի կադաստրի պետական կո
4-ի թիվ 19-ն հրամա

«Հայաստանի հանրապետության կառ
անշարժ գույքի կադաստրի պետական կո
թիվ 473-ն հրամա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)

առ 01.07.2013թ

Համայնք — ք. Երևան (անվանումը) — (Կոդ)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ							
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետակ	
							ընդամենը (5+6+7)	տրված անհատույց օգտագործման	տրված վարձակալության կարգով	օգտագործման և վարձակալության չտրված կարգով	ընդամենը (9+10+11)	տրված անհատույց օգտագործման
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		915.9	335.0	15.6	565.3			565.3		
1.2		բազմ տնկ, ընդամ		302.1	190.9	28.7	82.5			82.5		
1.2.1		այդ թվում՝ պտղ այգի		251.1	142.1	28.7	80.3			80.3		
1.2.2		խաղողի այգի		51.0	48.8		2.2			2.2		
1.2.3		այլ բազմամյա										
1.3		խոտհարք										
1.4		արոտ		722.2			699.4			699.4	22.8	
1.5		այլ հողատեսքեր		1416.0	2.6	3.7	1409.7			1409.7		
1		Ընդամենը		3333.4	528.5	48.0	2756.9			2756.9	22.8	
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուց		4741.2	3923.0	248.3	514.2			514.2	55.7	
2.1.1		այդ թվում՝ տնամերձ		3063.5	2821.5	0.6	240.6			240.6	0.7	
2.1.2		այգեգ-ն (ամառ-ն)		625.1	625.1							
2.2		հասարակ կառուց		1779.9	417.7	499.0	453.4			453.4	409.7	409.7
2.3		խառը կառուցապ		1291.0	38.2	21.5	1230.0			1230.0	1.3	
2.4		ընդհ օգտագործ		1976.3		7.9	1968.4			1968.4		
2.5		այլ հողեր		2050.8		1.2	2049.6			2049.6		
2		Ընդամենը		11839.1	4379.0	777.8	6215.5			6215.5	466.7	409.7
3.1	3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ.	արդյունաբ		2359.6	366.9	1296.7	643.2			643.2	52.8	
3.2		գյուղտն, արտադ		569.5	90.2	250.3	229.0			229.0		
3.3		պահեստների		51.5	17.9	24.2	9.4			9.4		
3.4		ընդերք օգտագոր		135.6			135.6			135.6		
3		Ընդամենը		3116.2	475.0	1571.2	1017.3			1017.3	52.8	
4.1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի,	էներգետիկայի		167.0		165.6	0.2			0.2	1.1	
4.2		կապի		11.5		3.6	7.9			7.9		
4.3		տրանսպորտի		534.3	0.8	26.3	12.9			12.9	494.2	494.2
4.4		կոմուն ենթակառ		178.2	0.7	17.5	89.8			89.8	70.2	
4		Ընդամենը		890.3	1.5	213.1	103.0			103.0	573.3	494.2
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպան		79.4							79.4	79.4
5.1.1		այդ թվում՝ արգելց										
5.1.2		արգելավայրեր										
5.1.3		ազգային պարկ		79.4							79.4	79.4
5.2		առողջարարակ										
5.3		հանգստի		262.9		0.7	163.3			163.3	98.9	
5.4		պատմ և մշակութ		646.8		17.4	628.3			628.3	1.1	
5		Ընդամենը		989.1		18.1	791.6			791.6	179.4	79.4
6	6.Հատուկ նշանակութ	Ընդամենը		1087.8							1073.0	1073.0
7.1	7. Անտառային	անտառ		875.7							875.7	
7.2		թփուտ										
7.3		վարելահող										
7.4		խոտհարք										
7.5		արոտ										
7.6		այլ հողեր										
7		Ընդամենը		875.7							875.7	
8.1	Ջրային	գետեր		56.9							56.9	
8.2		ջրամբարներ		16.2		2.8	9.8			9.8	3.6	
8.3		լճեր		54.1		4.1	0.5			0.5	49.6	
8.4		ջրանցքներ		39.6			1.4			1.4	38.3	

8.5	8.	հդտ. և ջր. այլ օբ.		6.1	0.0		1.4			1.4	4.7	
8		Ընդամենը		172.9	0.0	6.9	13.0			13.0	153.0	
9.1	9. Պահուստային	աղուտներ										
9.2		ավազուտներ										
9.3		ճահիճներ										
9.4												
9.5		այլ անօգտագործելի										
9		Ընդամենը										
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				22328.0	5384.0	2640.6	10891.8			10891.8	33.96.6	2079.1

Երևանի քաղաքապետ _____ Տ.Մարգարյան

ավարության առընթեր
միտեի 2011թ փետրվարի
ան»

ՁԵ N **22**

ավարության առընթեր
միտեի 2002թ հուլիսի 1-ի
ի»

(հեկտարներով)

ան		
տրված կարգավիճակում	ստացած կարգավիճակում և դրանց փոփոխումը	Օտարերկրյա ներդրումներով պետության մասնակցությամբ կազմակերպությունների
10	11	12
22.8		
22.8		
	55.7	
	0.7	
	1.3	
	57.0	
	52.8	
	52.8	
	1.1	
	70.2	
	79.1	
	98.9	
	1.1	
	100.0	
		14.9
	875.7	
	875.7	
	56.9	
	3.6	
	49.6	
	38.3	

	4.7	
	153.0	
	1317.6	14.9

«Հայաստանի հանրապետության
կառավարության առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեի 2011թ
փետրվարի 4-ի թիվ 19-ն հրաման»

ՁԵՎ N **22ա**

«Հայաստանի հանրապետության
կառավարության առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտեի 2002թ հուլիսի
1-ի թիվ 473-ն հրաման»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապոտության ոռոգվող հողերի հողային ֆոնդի առկայության և բաշխման (ըստ նպատակային նշանակության հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)

NN	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն, հողատեսք	Կոդ N/N	Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6)	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային	պետական	Օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		785.2	326.5	23.6	435.1		
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը		302.1	190.9	28.7	82.5		
1.2.1		այդ թվում պտղատու այգի		251.1	142.1	28.7	80.3		
1.2.2		խաղողի այգի		51.0	48.8		2.2		
1.2.3		այլ							
1.3		խոտհարք							
1.4		արոտ							
1.5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)		1087.3	517.4	52.3	517.6		
2.1	Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		2129.3	96.6		35.6		
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		1505.0	96.6		35.6		
2.1.2		այգեգործական (ամառանոցային)		624.3					
2.2		ընդհանուր օգտագործման							
2.3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		2129.3	2093.7		35.6		
3	3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության								
4	4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների								
5	5. Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7.1	7. Անտառային	անտառ		410.2				410.2	
7.2		թփուտ							
7.3		վարելահող							
7.4		խոտհարք							
7.5		արոտ							
7.6		այլ հողեր							
7		Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6)							
8	8.Ջրային								
9	9.Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9)				3626.8	2611.1	52.3	553.1	410.2	

Երևանի քաղաքապետ _____ Տ.Մարգարյան